Է.Մ. Ֆորսթեր - «Ինչին եմ ես հավատում», «Կրկնակի կեցցե ժողովրդավարությունը» աշխատությունից (1939թ.) - Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակ:

Ժողովրդավարությունն ինձ ձգում է հետեւյալի պատճառով՝ «այն ցանկալի հանրապետությունն է, որը սնուցվում է ազատությունից եւ կյանքից»: Իրականում ժողովրդավարությունը ցանկալի հանրապետությունը չէ եւ երբեք էլ չի դառնա այդպիսին: Սակայն այն ավելի քիչ է ատելի, քան կառավարման ժամանակակից այլ ձեւերից որեւէ մեկը, եւ այդ չափով էլ այն արժանի է մեր աջակցությանը: Նրա ելակետն այն դիրքորոշումն է, որ անհատն է կարեւոր եւ որ ամեն տեսակի մարդ էլ անհրաժեշտ է քաղաքակրթություն կերտելու համար: Այն չի տարանջատում իր քաղաքացիներին կառավարողների եւ կառավարվողների, ինչպես որ հակված է անել արդյունավետապաշտ կառավարման համակարգը: **Ես ամենից շատ հիանում եմ զգայունակ մարդկանցով, ովքեր ցանկանում են ինչ-որ բան ստեղծել կամ հայտնագործել, եւ կյանքին չեն նայում իշխանության դիտանկյունից: Այդպիսի մարդիկ ժողովրդավարության պայմաններում ավելի մեծ հնարավորություններ են ձեռք բերում, քան կառավարման որեւէ այլ ձեւի դեպքում:** Նրանք ստեղծում են մեծ կամ փոքր կրոններ, գրականության եւ արվեստի գործեր, կամ անաչառ գիտական հետազոտություն են անում: **Նրանք նաեւ կարող են լինել այսպես կոչված «հասարակ մարդիկ», որոնք ստեղծարար են իրենց անձնական կյանքում, օրինակ, պատշաճ կերպով դաստիարակում են իրենց երեխաներին կամ օգնում իրենց հարեւաններին: Բոլոր այս մարդիկ ինքնաարտահայտման կարիք ունեն, սակայն նրանք չեն կարող դա անել, եթե հասարակությունն իրենց գործելու ազատություն չտրամադրի: Եվ նրանց առավելագույն ազատություն տվող հասարակարգը ժողովրդավարութունն է:**

Ժողովրդավարությունը մեկ այլ արժանիք էլ ունի. այն ընդունում եւ քաջալերում է քննադատությունը, եւ եթե չկա հասարակական քննադատություն, ապա սխալները կմնան կոծկված: Ահա թե ինչու եմ ես ապավինում մամուլին, չնայած նրա բոլոր ստերին եւ գռեհկությանը, եւ ահա թե ինչու եմ վստահում խորհրդարանին: Խորհրդարանը հաճախ ծաղրի առարկա է դառնում, որովհետեւ այն կարծես դատարկախոսերի ակումբ լինի, եւ ես հենց այդ պատճառով էլ վստահում եմ նրան: Վստահում եմ խարհրդարանի այն անդամին, ով մշտապես քննադատում է: Նրան նախատում են, որպես դժգոհող եւ չտեղեկացված մարդ, բայց նա միեւնույն է, քննադատում է այն բաները, որոնք այլ կերպ երբեք չէին հիշատակվի: Եւ շատ հաճախ քննադատությունը շտկում է իրավիճակը պարզապես հիշատակված լինելով: Երբեմն էլ լավ հանրային պաշտոնյան հաջողության պատճառով սկսում է գլուխը

կորցնել եւ իրեն Ամենակալ Աստված համարել: Այսպիսի պաշտոնյաները հատկապես շատ են հանդիպում ներքին գործերի նախարարությունում: Բայց վաղ թե ուշ խորհրդարանում նրանց մասին հարցեր կառաջանան, եւ նրանք ստիպված կզգաստանան: Անկախ այն բանից, թե խորհրդարանը ներկայացուցչական է, կամ որքանով ազդեցիկ եմ ես գնահատում այդ հաստատությունը, քանի որ այն քննադատում եւ խոսում է, եւ որովհետեւ նրա շատախոսությունը լայնորեն արձագանքվում է հասարակության մեջ: **Ուստի կրկնակի կեցցե ժողովրդավարությունը. առաջինը նրա համար, որ այն ընդունում է բազմազանությունը, իսկ երկրորդը՝ որովհետեւ այն թույլատրում է քննադատությունը: Սակայն երկու կեցցեները լիովին բավական են եւ երրորդի կարիքը չկա: Միայն սիրո վրա հիմնված հանրապետությունն է արժանի երրորդին:**

Բայց եւ այնպես, ի՞նչ կասեիք ուժի մասին: Մինչ մենք փորձում ենք լինել զգայուն, կիրթ եւ համբերատար, տհաճ հարց է ծագում. արդյոք ամբողջ հասարակությունը հիմնված չէ՞ ուժի վրա: Ինչպես կարող է կառավարությունը ճիշտ կառավարելու հույսեր փայփայել, եթե չկա բանակի եւ ոստիկանության հանդեպ վստահություն: Եւ եթե անհատի գլխին են տալիս, կամ հալածում եւ ուղարկում են աշխատանքային ճամբար, կարծիք արտահայտելն ի՞նչ օգուտ կբերի: Այս խնդիրն ինձ այնքան չի անհանգստացնում, ինչքան որոշ այլ խնդիրներ: Ես հասկանում եմ, որ ողջ հասարկությունն է հիմնված ուժի վրա: **Բայց բոլոր մեծագույն ստեղծագործ աշխատանքները եւ բոլոր պարկեշտ մարդկային հարաբերությունները տեղի են ունեցել այն ժամանակահատվածում, երբ ուժը դեռ ձեւավորված չի եղել: Այս ժամանակահատվածներն են կարեւոր: Ես ուզում եմ, որ այդ ժամանակահատվածները լինեն հնարավորին չափ երկար եւ հաճախակի: Եւ ես հենց դա եմ համարում «քաղաքակրթություն»:** Որոշ մարդիկ ուժը հնարավորին չափ երկար ետին պլանում պահելու փոխարեն, իդեալականցնում են այն, մղում առաջին պլան եւ երկրպագում նրան: Իմ կարծիքով նրանք սխալվում են, իսկ նրանց հակադրվողները՝ խորհրդապաշտները, ավելի մեծ սխալ են գործում, երբ հրապարակավ ժխտում են ուժի գոյության փաստը: Ես գտնում եմ, որ այն գոյություն ունի եւ մեր առաջնային խնդիրն եմ համարում նրան իր արկղից դուրս գալուն խանգարելը: Վաղ թե ուշ այն դուրս է գալու եւ ոչնչացնելու է ե՛ւ մեզ ե՛ւ մեր ստեղծած բոլոր հիանալի գործերը: Բայց բարեբախտաբար այդ ուժը հավերժական չէ, քանի որ ուժ գործադրողները, բարեբախտաբար, հիմար են:

Այսպիսով սա այն ամենն է, ինչ ես մտածում եմ ուժի եւ բռնության մասին: Ավա՛ղ սա աշխարհի առաջնային իրականությունն է, բայց այն միշտ չէ, որ տիրապետող է: Որոշ մարդիկ ուժի բացակայությունն «անկում” են անվանում. ես այն անվանում եմ «քաղաքակրթություն» եւ այդպիսի ընդմիջումներում մարդկության ստեղծագործ աշխատանքն իրեն արդարացում է: Ես աչք եմ փակում, մինչեւ ճակատագրից հարված չստանամ: Իսկ թե իմ դեպքում սա քաջության, թե վախկոտության արդյունք է, պարզ չէ: Բայց ես գիտեմ, որ եթե մարդիկ անցյալում նույն կերպ չվարվեին, ոչ մի արժեքավոր բան չէր մնա: **Իմ կողմից հարգված մարդիկ իրենց պահել են անմահների նման եւ հասարակությանն էլ մոտեցել են որպես հավերժական երեւույթի: Իրականում երկու մոտեցումներն էլ սխալ են, սակայն երկուսն էլ պետք է համարենք ճշմարիտ, որպեսզի շարունակենք սնվել, աշխատել եւ սիրել, եւ մարդկային հոգուն շնչելու հնարավորություն տանք:** Թվում է, որ ոչ մի նոր դարաշրջան էլ չի ծագի մարդկության համար, ոչ մի ավելի լավ եւ հզոր Ազգերի լիգա չի ստեղծվի, ոչ մի քրիստոնեության նոր ձեւ եւ ոչ էլ քրիստոնեությանն այլընտրանքային կրոն խաղաղություն չի բերի աշխարհին եւ մարդ արարածը չի կատարելագործվի, ոչ մի «հոգու փոփոխություն» չի լինի: Սակայն մենք չպետք է հուսահատվենք եւ չենք կարող հուսահատվել. պատմությունը վկայում է, որ մարդիկ համառությամբ շարունակել են արարել նույնիսկ սրի շողքի տակ եւ նրանք իրենց գիտական, արվեստի եւ կենցաղային գործերն անաչառությամբ են արել, եւ մենք պետք է հետեւենք նրանց օրինակին եւ շարունակենք արարել եւ ստեղծագործել նույնիսկ ռմբակոծիչների շողքի տակ:

Ինձանից ավելի խիզախ ու խելոք մարդիկ տեսնում են մարդկության փրկությունն ապագայում, եւ քաղաքակրթության մասին իմ արտահայտած գաղափարները կհամարեն ողորմելի, անլուրջ եւ անիմաստ խաղ: Իհարկե, անիմաստ է պնդել, որ մենք չենք կարող բարելավվել, եւ որ մարդ արարածը, ով մի քանի հազարամյակներ շարունակ երկրում տիրակալ է եղել, երբեք չի սովորի իր այդ իշխանությունը ճիշտ օգտագործել: Ես նկատի ունեմ, որ եթե մարդիկ շարունակեն սպանել իրար, ինչպես հիմա են դա անում, աշխարհը չի կարող բարելավվել, եւ քանի դեռ գնալով մարդությունը շատանում է եւ նրանց իրար ոչնչացնելու մտադրությունները գերակայում են, աշխարհի վիճակն ընդհակառակը՝ կարող է ավելի վատթարանալ: **Ի՞նչն է լավը մարդկանց մեջ, եւ հետեւապես նաեւ աշխարհում. նրանց ստեղծագործելու համառությո՞ւնը, հավա՞տը եւ հավատարմությո՞ւնը անշահախնդիր ընկերության հանդեպ՝.** եւ թեպետ բռնությունը եղել եւ իսկապես մնում է հիմնական մասնակիցն այս խառնաշփոթ իրականության մեջ, ես հավատում եմ, որ

ստեղծարարությունը նույնպես մնում է եւ միշտ պատրաստ է իշխողի դերում հանդես գալ, երբ բռնությունը նահանջի:

Փրկության որոնումներում մենք թերեւս կարող են շրջվել դեպի հերոսապաշտությունը: Բայց իմ կարծիքով, սա էլ մեզ չի օգնի: **Հերոսապաշտությունը վտանգավոր սովորույթ է, եւ ժողովրդավարության նվազագույն արժանիքներից մեկն այն է, որ նա չի խրախուսում դա եւ չի ստեղծում այդպիսի անսանձ անհատներ, որոնք մեզ հայտնի են այսպես կոչված «մեծ դեմք» անունով: Փոխարենը՝ այն ստեղծում է հասարակ մարդկանց տարբեր տեսակներ, ինչն անհամեմատ ավելի էական ձեռքբերում է:** Բայց այն մարդիկ, ովքեր հետաքրքրված չեն կյանքի բազմազանությամբ եւ ովքեր չունեն սեփական կարծիք, դժգոհում են սրանից եւ սպասում են ինչ-որ առաջնորդ հերոսի, որպեսզի խոնարհվեն նրա առջեւ եւ կուրորեն հետեւեն նրան: Սա նշանակալից փաստ է, որ առաջնորդող դեմքի առկայությունն այսօրվա բռնակալների համար ամենասովորական ձեւաչափն է: Արդյունավետապաշտ ռեժիմը չի կարող գործադրվել առանց մի քանի հերոսների՝ որոնք բերվել են ասպարեզ, որպեսզի հրապուրեն հիմարներին, ինչպես սալորն են դնում անհաջող ճաշի մեջ, որ համ տա: Մի հերոսը գագաթին, եւ երկու օգնականներ նրա աջից ու ձախից՝ սա ընդունված դասավորվածություն է, եւ երկչոտն ու անտարբերը սփոփվում են եռյակի կողմից եւ, խոնարհվելով, իրենց երեւելի եւ ուժեղ են զգում:

Ո՛չ, ես չեմ վստահում մեծ դերակատարներին: Նրանք իրենց շուրջ միապաղաղության եւ միօրինակության անապատ են սարքում, իսկ հաճախ էլ նաև՝ արյան լիճ: Եւ ես միշտ զգում եմ հասարակ մարդկանց հաճույքը, երբ դրանք հնձվում են եւ հավասարեցվում են հողին: Առաջնորդն ապրում է մի այնպիսի ամբողջական ձախողում, որը ոչ մի արվեստագետ, ոչ էլ սիրահարված մարդ չի ապրում, որովհետեւ վերջիներիս համար արարչության գործընթացն ինքնին հաջողություն է, իսկ առաջնորդ դեմքի համար միայն արդյունքն է հաջողություն:

Ես ամեն դեպքում հավատում եմ ազնիվ մարդկանց կամ, այլ կերպ ասած, ազնվականությանը, եթե դա այդպես կարելի է անվանել եւ, եթե ժողովրդավարն իրավունք ունի այդ բառը գործածել: Ոչ թե ուժին ապավինող ազնվականություն՝ հիմնված աստիճանակարգության եւ ազդեցության վրա, այլ զգայունության, քաղաքավարության եւ համարձակության ազնվականություն: Նրա անդամներն

ամենուր են՝ բոլոր ազգերում, բոլոր դասակարգերում ու բոլոր ժամանակներում, եւ նրանց միջեւ ինչ-որ չպայմանավորված առեղծվածային փոխըմբռնում է գործում:
Նրանք ներկայացնում են հնուց եկած իսկական մարդկային տեսակը՝ որը մարդկության միակ եւ հարատեւ հաղթանակն է ընդդեմ դաժանության եւ քաոսի: Նրանցից հազարավորները զոհվում են անանուն, մի քանիսը, սակայն, մեծ անուն են թողնում:
Նրանք նույնքան նրբանկատ են ուրիշների նկատմամբ, որքան սեփական անձի նկատմամբ, նրանք ուշադիր են, բայց ոչ բծախնդիր, **նրանց համարձակությունը հանդգնություն չէ, այլ համբերատար դիմադրելու ունակություն,** եւ այդքան լուրջ լինելով հանդերձ, նրանք զուրկ չեն հումորից: Ես ոչ մի օրինակ չեմ բերում, քանզի դա սխալ կարող է հասկացվել, քանի որ կարդացողը կարող է խորհել, թե արդյոք նա կցանկանար հանդիպել այդպիսի մարդու, կամ՝ դառնալ այդպիսին: Իսկ նրանք շանունակում են իրենց արշավը. մի անպարտելի բանակ, որը, սակայն, դեռեւս վերջնական հաղթանակի չի հասել: Ազնիվ մարդիկ, ընտրյալներ, լավագույն մարդիկ՝ բոլոր այս բառերը, որով փորձում ենք նրանց նկարագրել՝ կեղծ են եւ սին, եւ նրանց կազմակերպելու բոլոր փորձերը՝ ձախողված:
Կրկին եւ կրկին, տեսնելով եւ հասկանալով նրանց արժանիքներն ու նշանակությունը, իշխանությունը փորձեց օգտագործել նրանց՝ ուռկանով բռնելով նրանց Եգիպտական Քահանայությանը կամ Քրիստոնեական Եկեղեցուն, Չինական Պետական Ծառայությանը կամ Խմբային շարժման համար, կամ պատվով կամ այլ ձեւով նրանց հրապուրելով: Բայց նրանք դուրս են պրծնում ուռկանից եւ փախնում. երբ ուռկանը հանում են, նրանք արդեն չկան: Նրանց տաճարը, ինչպես նրանցից մեկը նշեց, Սրտի սուրբ զգացումներն են, իսկ թագավորությունը՝ լայն բացված աշխարհը, որի վրա նրանք երբեք չեն իշխի:

Քանի դեռ կան այսպիսի մարդիկ մեր մեջ, հստակ կարող ենք ասել որ մարդկության ստեղծման փորձը չի ձախողվել: Բայց սա կարող է համարվել նաև լիակատար ողբերգություն՝ ողբերգություն, քանի որ ոչ մի գործիք չի հայտնագործվել, որի օգնությամբ այս անձնական պարկեշտությունը հնարավոր լիներ փոխանցել հանրային գործերին: Հենց որ մարդիկ իշխանության են հասնում, նրանք անազնիվ են դառնում եւ երբեմն էլ մի քիչ ցնդած, որովհետեւ իշխանությունը նրանց բարձրացնում է այնպիսի ասպարեզ, որտեղ սովորական ազնվությունը երբեք իրեն չի արդարացնում: Օրինակ, խորհրդարանի շենքի մոտ թերթ վաճառողը հանգիստ կարող է թողնել իր թերթերը եւ գնալ խմիչք գնելու՝ թողնելով իր գլխարկն այնտեղ, եւ յուրաքանչյուրն, ով թերթ կվերցնի, անպայման դրամ կգցի նրա գլխարկի մեջ: Բայց

խորհրդարանի շենքի ներսում գտնվողները չեն կարող այդպես միմյանց վստահել: Առավել եւս, նրանց կողմից կազմավորված կառավարությունը չի կարող վստահել այլ կառավարությունների: Այստեղ փոխհարգանքը չի աշխատում, այլ միայն կասկածը, զենքը եւ դավաճանությունը: Ինչքան լավ է կազմակերպված լինում հանրային կյանքը, այնքան ավելի խորն է խորտակվում նրա բարոյական բնութագիրը: Այժմյան ազգերը միմյանց հանդեպ ավելի վատ են տրամադրված, քան երբեւէ անցյալում, նրանք թալանում, արհամարհում եւ խաբեությամբ են զբաղվում, անտեղի պատերազմներ են սկսում եւ սպանում են հնարավորին չափ շատ կանանց եւ երեխաների, մինչդեռ նախնադարյան ցեղերը բոլոր դեպքերում կաշկանդված էին սնապաշտական չգրված օրենքներով: Սա սթափեցնում է, չնայած, ինչքան մեծ է խավարը, այնքան պայծառ են շողում փոքրիկ լույսերը, որոնք միմյանց հորդորում եւ ազդանշան են տալիս. «Չնայած շատ գոհ չեմ, բայց դեռ կամ: Իսկ դո՞ւ»: Ահա իմ ասած ազնիվ մարդկանց անշեջ լույսերը, անհաղթելի բանակի ազդանշանները: Բացի դրանից, կարծում եմ որ միմյանց հաղորդում են նաեւ սա. «Ամեն դեպքում, եկեք կյանքը վայելենք, քանի դեռ կանք և կարող ենք»:

Ապագայի փրկիչը, եթե նա երբեւէ գա, չի քարոզի Նոր ավետարան: Նա պարզապես կօգտագործի այդ ազնիվ մարդկանց, նա պիտանի կդարձնի բարյացակամությունն ու լավ բնավորությունը, որոնք դեռեւս կան: Այլ կերպ ասած, նա նոր մոտեցում, նոր գործելակերպ կներմուծի: Տնտեսագիտությունն ասում է, որ եթե տարաբաշխման նոր քաղաքականություն մշակվեր, ապա աղքատություն չէր լինի, եւ մարդիկ ստիպված չէին լինի սովի մատնվել մի վայրում, մինչդեռ մի ուրիշ վայրում բերքն այնքան շատ էր, որ չէր հասցվում հավաքվել եւ ստիպված այն թողում էին հողի մեջ: **Նույնպիսի փոփոխություն է անհրաժեշտ կատարել նաեւ բարոյականության եւ քաղաքականության ասպարեզներում**: Այդ ցանկությունն ամենեւին նոր չէ, օրինակ այն արտահայտվել է Ջակապոնե դա Տոդիի աստվածաբանական մեկնաբանություններում, ավելի քան վեց հարյուր տարի առաջ. “Ordena questo amore, tu che m'ami”: «Ո՛վ դու, որ սիրում ես ինձ, կարգավորիր քո սերը»: Նրա խնդրանքը չիրականացավ, եւ ես կարծում եմ, որ այն երբեք էլ չի իրականացվի. սակայն հնարավոր ճանապարհը սա է, եւ ոչ թե բարոյականության բարելավումը: **Ոչ թե ավելի լավը դառնալով, այլ իր բնական առաքինությունները կարգավորելով եւ բաշխելով Մարդ արարածը կփակի Ուժն իր արկղի մեջ եւ դրանով ժամանակ կշահի, որպեսզի բացահայտի տիեզերքն ու իր տեղն ըստ արժանվույն հաստատի նրա մեջ:** Ներկայումս նա ուսումնասիրում է միայն այնպիսի պահերի, երբ ուժը թուլանում է, եւ նրա աստվածային արարչագործությունը անարժեք կողմնակի հետեւանք է թվում,

որը անտեսվում է, հենց որ լսվում է թմբկահարների ձայնը եւ ռմբակոծանիչների աղմուկն է բարձրանում:

Վերեւում ներկայացված են անհատապաշտ եւ ազատամիտ մարդու մտքերը, ում աչքերի առջեւ լիբերալիզմը փլուզվեց, որի համար նա սկզբում ամաչեց: Հետո, շուրջը նայելով, նա գտավ, որ ամաչելու ոչ մի առանձնահատուկ պատճառ չկա, քանզի ուրիշներն ինչ էլ որ զգային եւ հասկանային, նրանք միեւնույնն է մնում էին վտանգված: Իսկ ինչ վերաբերում է անհատապաշտությանը, ապա եթե նույնիսկ ինչ որ մեկը ցանկանա, միեւնույնն է դրանից ազատվելու ոչ մի ճանապարհ չի կարող գտնել:
Հերոս դիկտատորը կարող է իր քաղաքացիներին ճնշել, մինչեւ որ նրանք դառնան միակերպ, բայց նա չի կարող նրանցից ձուլել մեկ մարդ: Դա իր ուժերից վեր է: Նա կարող է հրամայել նրանց միավորվել եւ դրդել նրանց զանգվածային խժդժությունների, բայց նրանք պարտավոր են ծնվել եւ մահանալ առանձին, եւ ելնելով այս անժխտելի հանգամանքից, նրանք միշտ կխուսափեն ամբողջատիրական ուղուց: Ծննդյան հիշողություններն ու մահվան սպասումներն ընդմիշտ թաքնված են մարդկային էության ներսում՝ առանձնացնելով նրան մյուսներից եւ օժտելով նրան այլոց հետ շփվելու ընդունակությամբ: Մերկ եմ եկել այս աշխարհ, մերկ էլ գնալու եմ այս աշխարհից: Եւ սա ինձ մի հիանալի բան է հիշեցնում, որ բոլորս էլ նույնն ենք՝ անկախ մեր շորերի եւ մաշկի գույնից: